

<b>11.</b>	<b>ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ PEDAGOGY AND PSYCHOLOGY ПЕДАГОГИЧЕСКИЕ И ПСИХОЛОГИЧЕСКИЕ НАУКИ</b>
------------	--

**ՎԱՐՔԻ ՀՈԳԵԴԻՆԱՄԻԿ ՄՈԴԵԼԸ  
ԵՎ ՆՐԱ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՀԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ**

**Լ. Ն. ՔՈՒՐՔՉՅԱՆ**

*Մանկավարժական գիտությունների թեկնածու*

**Ա. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

*Կենսաբանական գիտությունների թեկնածու*

Մարդկանց վարքագծում դրսևորվող բացասական երևույթների ուսումնասիրությունը և դրանց կանխարգելումը ցանկացած հասարակության մեջ կարելի է դասել առաջնահերթ նշանակության խնդիրների շարքը: Առավել արդիական է այդ խնդիրն այն երկրներում, որտեղ դիտվում է սոցիալական, տնտեսական, քաղաքական անկայունություն: Դրա հետ կապված՝ անհանգստացնում է երեխաների, հատկապես, անչափահաս և չափահաս տարիքի անձանց, վարքագծի շեղումների (փախուստ տնից, կանխամտածված ստախոսություն, դեփիանտ, դելիկվենտ, հանցավոր վարքի դրսևորում, մարդկանց և կենդանիների նկատմամբ ցուցաբերվող դաժանություն, սուիցիդալ հակումներ և այլն) թվի աճը: Առավել արդիական է մանկական հանցագործությունների և հակասոցիալական վարքագծի թվի աճի խնդիրը:

Խնդրի տեսական վերլուծությունը ցույց է տալիս, որ թվարկված շեղումների համար ընդհանուր է ազդեցիկությունն իր դրսևորման տարբեր ձևերով հանդերձ, ինչպես նաև բացասական նախատրամադրվածությունը վարքագծում (չարակամությունը), որը հանգեցնում է սոցիալական և հոգեբանական դեգրադապտացիայի: Ազդեցիկությամբ և չարակամությամբ ուղեկցվող շեղումների հիմքում, որպես կանոն, ընկած են հոգեբանական և սոցիալ-հոգեբանական գործոնները, որոնք հանգեցնում են շեղումների անձի մոտիվացիոն (դրդապատճառային), հուզականային և բարոյական ոլորտներում:

Ներկայումս մանրամասնորեն ուսումնասիրվում են տարբեր տարիքի երեխաների վարքագծի շեղումների հոգեբանական պատճառները, գործոնները, մշակվում են պսիխոպրոֆիլակտիկայի և կարգավորման ծրագրեր [1; 4; 5; 9; 11]: Հիմնական ուշադրությունը կենտրոնացված է երեխայի զարգացման գործառ-

նական շեղումների վրա, որոնք բազմազան են, սակայն իրենցից ներկայացնում են միայն գործունեության անձնային-մտածողական բաղադրիչի և շփման խանգարումներ: Միաժամանակ շատ քիչ ուշադրություն է դարձվում հարցի կենսաբանական կողմին, մասնավորապես գենետիկական հակվածությանը:

Ելնելով կատարած հետազոտությունների արդյունքներից՝ Ի. Ա. Ֆուրմանովը կարծում էր, որ ժամանակակից հոգեբանության մեջ գոյություն ունեցող հոգեբանավերլուծական, ֆրոլստրացիոն, վարքաբանական մոտեցումները, որոնք մեկնաբանում են մանկական ագրեսիվության ծագումնաբանությունը, անկասկած ունեն որոշակի արժանիքներ, սակայն դրանցից և ոչ մեկն էլ իրենից չի ներկայացնում ագրեսիվության մոդել: Դրանք բավարար ճշգրտությամբ չեն բնորոշում ագրեսիայի դրսևորման հոգեբանական պատճառները, չեն ցույց տալիս ագրեսիվ ռեակցիայի ընթացքն ուղեկցող հոգեկան պրոցեսների դինամիկան և փոխկապակցվածությունը, չեն տալիս ագրեսիվության դրսևորման հոգեբանական կարգավորման մեխանիզմների նկարագիրը [10]:

Փաստորեն, նրա կարծիքով, անհրաժեշտություն կա ստեղծելու վարքի շեղումների (ագրեսիվություն, չարականություն) ընդհանուր հոգեբանական տեսություն, որը կմիավորեր իր մեջ վարքագծի շեղման՝

ա) **ֆենոմենոլոգիան**, որը ներառում է ագրեսիվ վարքագծի, ինչպես նաև վարքագծի շեղումների բացասական հետևանքների ընդհանուր բնութագիրը, դասակարգումն, ագրեսիվության տարբեր տիպերի և վարքագծի շեղման այլ ձևերի միջև առկա փոխկապակցվածությունը,

բ) **էթիոլոգիան**, որը տալիս է վարքագծի շեղումների, մասնավորապես ագրեսիվության կենսաբանական, հոգեբանական և սոցիալական բնույթը, դրսևորման կոնկրետ պատճառները և պայմանները, բացի այդ բացահայտում է օտոգենեզում ագրեսիվության ձևավորման հոգեբանական մեխանիզմները, ինչպես նաև ագրեսիվ երեխաների, չափահասների և մեծերի անհատական-հոգեբանական և անձնային առանձնահատկությունները, վարքագծի տարբեր ձևի շեղումների տարբերակումը և զարգացումը,

գ) **կանխատեսումը և կարգավորումը:**

Պետք է նկատի ունենալ, որ շեղվող վարք դրսևորող անձնավորությունը հանդես է գալիս որպես կենսաբանական և սոցիալական գործոնների մի յուրահատուկ ամբողջություն, որը ծնվում է որոշակի գենետիկորեն պայմանավորված հատկություններով ու նախադրյալներով, որոնց հետագա զարգացումն ու կատարելագործումը պայմանավորվում է սոցիալական միջավայրի ներգործությամբ: Հետևաբար, շեղվող վարքի պատճառականության շղթան ավելի լիարժեք է բացահայտում այն հոգեբանական և սոցիալ-հոգեբանական մոտեցումները, որոնք, հանդիսանալով օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների փոխազդեցության արդյունք, շեշտը դնում են անձնային գործոնների վրա: Այդպիսի անձնային գործոն է հանդիսանում նաև ագրեսիան, որը անձի սոցիալականացման գործընթացում ձեռք է բերում դրսևորման տարբեր ձևեր:

Վարքի շեղումները բնութագրվում են իրենց դրսևորումների բազմազանությամբ: Սակայն շեղվող վարքի տարբեր ձևերն ունեն ընդհանուր հատկություններ, որոնք շեղումների խմբին պատկանելու չափանիշ են հանդիսանում: Նման կարևոր նշաններից է ապակառուցողականությունը (դեստրուկտիվությունը):

Դեստրուկտիվությունը, իր հերթին, սերտորեն կապված է մարդկային այնպիսի բազային բնութագրի հետ, ինչպիսին ագրեսիան է:

«Ագրեսիա» բառը լատիներենից թարգմանաբար նշանակում է «հարձակում»: Հարկ է տարբերակել «ագրեսիա» և «ագրեսիվություն» հասկացությունները, որոնք հոմանիշ չեն: Ագրեսիվություն ասելով հասկանում ենք անձնային առանձնահատկություն, որն արտահայտվում է ուրիշի նկատմամբ ագրեսիվ գործողություններ իրականացնելու պատրաստակամության մեջ, իսկ ագրեսիան ցանկացած մտադրված գործողություններ են, որոնք ուղղված են ուրիշ մարդուն, մարդկանց խմբին կամ կենդանուն վնաս պատճառելուն [8]:

Հոգեբանության մեջ ագրեսիա ասելով հասկանում են այն միտումը, որը դրսևորվում է իրական վարքում կամ երևակայության մեջ՝ նպատակ ունենալով իրեն ենթարկել ուրիշներին կամ գերիշխել նրանց նկատմամբ:

Ա. Բանդուրան և Ռ. Ուոլտերսը ուրիշ անձանց ուղղված ագրեսիան անվանում են հակասոցիալական ագրեսիա և կապում սոցիալապես ապակառուցողական բնույթի գործողությունների հետ: Համաձայն Ա. Բասի՝ ագրեսիան վարքի ցանկացած դրսևորում է, որը սպառնալիք է պարունակում կամ ուրիշներին վնաս է հասցնում: Ըստ Լ. Բերկովիցի՝ որպեսզի այս կամ այն գործողությունը որակավորվի որպես ագրեսիա, այն պետք է իր մեջ ներառի վիրավորելու և անարգելու մտադրություններ, այլ ոչ թե ուղղակի հանգեցնի այդպիսի հետևանքների: Ռ. Բերոնն ու Դ. Ռիչարդսոնը գտնում են, որ ագրեսիան հարկ է դիտարկել որպես վարք-մոդել, այլ ոչ թե հույզ, դրդապատճառ կամ դիրքորոշում [2]:

Ագրեսիվության էթիոլոգիան, բնույթը, ինչպես նշում է Ի. Ա. Ֆուրմանովը, տարբեր ժամանակաշրջաններում մեկնաբանվում է երեք՝ իրարից տարբեր հոգեբանական տեսություններով [10]: Համաձայն դրա՝ առանձնացվում են հետևյալ վարքի մոդելները՝

● **հոգեդինամիկ մոդել**, երբ ագրեսիվ վարքը դիտարկվում է որպես էվոլյուցիոն գործընթաց.

- պսիխոէներգետիկ (Ջ. Ֆրեյդի բնագղների, հակումների տեսություն),
- էթիոլոգիական մոտեցում (Կ. Լորենցի վարքի տեսություն),
- անհատական հոգեբանության մեջ ագրեսիվության տեսություն (Ա. Ադլեր),
- սոցիո-դինամիկ տեսություն (Կ. Հորնի),
- դեստրուկտիվության տեսություն (Է. Ֆրոմմ);

● **ֆրուստրացիոն մոդել**, երբ ագրեսիվ վարքը ներկայացվում է որպես իրադրային (Ջ. Դոլլարդ, Ն. Միլլեր);

● **աֆֆեկտիվ-դինամիկ մոդել**, երբ վարքի շեղումները համարվում են ճգնաժամային իրադրության ռեակցիաներ, իրադրություն, որը առաջնում է հրատապ պահանջմունքների դեպրիվացիայի կամ ֆրուստրացիայի հետևանքով (Կ. Լևին, Լ. Ի. Բոժովիչ, Ա. Բանդուրա):

Աշխատանքում մենք կանդրադառնանք խնդրի թե՛ հոգեբանական, թե՛ կենսաբանական (զենետիկական հակվածության) առանձնահատկություններին: Հիմք ընդունելով շեղվող վարքի հոգեդինամիկ մոդելը և ելնելով ժամանակակից զենետիկայի ձեռքբերումներից՝ կփորձենք վերլուծել շեղվող վարքի, մասնավորապես ագրեսիայի դրսևորման և զենետիկական հակվածության միջև առկա կապը:

Շեղվող վարքի հիմնախնդիրը հոգեբանական այն բարդ խնդիրներից է, որի լուծումը պահանջում է հարցի բազմակողմանի և խորը վերլուծություն: Ներքին կենսաբանական գործընթացները որոշակի դեր են խաղում շեղվող վարքի ձևավորման գործում: Դրանք որոշում են միջավայրի ներգործություններին տրվող մարդու պատասխանների ուժն ու բնույթը: Չնայած շեղվող վարքի կենսաբանական հիմքերի մասին վկայող փաստերին, դրանք գործում են միայն որոշակի սոցիալական համատեքստում: Ավելին, սոցիալական պայմաններն ինքնին կարող են առաջացնել կենսաբանական փոփոխություններ օրգանիզմում:

Վարքի և ժառանգականության միջև համահարաբերականությունն ընդունվում է շատ մասնագետների կողմից (Կ. Լորենց, Ջ. Ֆրեյդ, Կ. Աբրահամ, Ա. Ադլեր, Կ. Յորնի, Է. Ֆրոմմ և ուրիշներ):

Էվոլյուցիոն մոտեցումը, որը հիմնվում է բնական ընտրության և ժառանգականության օրենքների վրա, դիտարկում է մարդկանց վարքը որպես տարբեր ժառանգական ծրագրերի դրսևորում: Կ. Լորենցի էթոլոգիական մոտեցումը բացատրում է մարդկային վարքի տարբեր երևույթները, օրինակ, ագրեսիան՝ ամենից առաջ գոյության պայքարի բնածին բնագոյով: «Ագրեսիան, որի դրսևորումը հաճախ նույնացվում է մահվան բնագոյի դրսևորումների հետ, նույնպես բնագոյ է, ինչպիսին մյուս բնագոյները, և բնական պայմաններում այնպես, ինչպես դրանք, ծառայում է կյանքի և տեսակի պահպանմանը» [7]:

Համաձայն Կ. Լորենցի՝ ագրեսիան իր սկիզբն է առել նախ և առաջ գոյության պահպանման պայքարի բնագոյից, որը առկա է մարդկանց, ինչպես նաև այլ կենդանի էակների մոտ: Նա ենթադրում էր, որ այս բնագոյը զարգացել է երկարատև էվոլյուցիայի ընթացքում: Կ. Լորենցը գտնում էր, որ, բացի բնածին պայքարի բնագոյից, բոլոր կենդանի էակներն օժտված են սեփական ձգտումները ճնշելու /վերահսկելու/ հնարավորությամբ: Վերջինս կախված է նրանց՝ իրենց զոհերին լուրջ վնաս հասցնելու ունակությունից: Տվյալ բնագոյը զարգացել է էվոլյուցիայի ընթացքում՝ ելնելով օրգանիզմի համար կենսաբանական նպատակահարմարությունից: Ագրեսիայի ուժը, ըստ հետազոտողի, կախված է կուտակված ագրեսիվ էներգիայի քանակից և յուրահատուկ ազդակների ուժից, որոնք դրդում են ագրեսիվ վարքի:

Կ. Լորենցը կարծում էր, որ վնաս պատճառելու հետ չկապվող գործողություններին մասնակցությունը կարող է կանխարգելել վտանգավոր մակարդակի ագրեսիվ էներգիայի կուտակումը և այդպիսով իջեցնել բռնությունների դրսևորման հավանականությունը [6]:

Ժամանակակից գենետիկայի ձեռքբերումները, ինչպես նաև այդ բնագավառում կատարված հայտնագործությունները ներկայումս հնարավորություն են ընձեռում հիմնավորելու դեռևս անցած դարում բարձրաձայնված այն գաղափարը, որ վարքը ոչ միայն սոցիալական, այլև կենսաբանական հիմքեր ունի: Շեղվող վարքի կենսաբանական դետերմինանտներից են համարվում հորմոնների, մասնավորապես, տեստոստերոնի ազդեցությունը: Ջ. Դաբբսը և Ռ. Մորրիսը (1990) պատերազմի 4000 վետերանների օրինակի հիման վրա եզրակացրին, որ գոյություն ունի կապ տեստոստերոնի մակարդակի և հակահասարակական վարքի նկատմամբ հակվածության միջև [3]: Գիտնականները հայտնաբերել են գեների տարբերակներ, որոնք ընկճում են մարդկանց մոտ շրջապատի հուզա-

կան /էմոցիոնալ/ վիճակն ընկալելու ունակությունը: Գիտական հետազոտությունները և կուտակված տվյալները թույլ են տալիս եզրակացնելու, որ մարդն ամբողջությամբ ծրագրավորված է: Խղճահարությունը, վախը, ագրեսիան, լավ տրամադրությունը և հուզական /էմոցիոնալ/ այլ դրսևորումներ ծրագրավորված են, այն էլ՝ այն չափաբաժնով, որը մեզ անհրաժեշտ է:

Ինքնավերահսկումը, ինչպես նաև բռնկուն բնավորությունը, պարզվում է մեր «արյան մեջ» է: Գերմանացի գիտնականները DARPP-32 գենի հետազոտության ժամանակ կատարել են բավական հետաքրքիր դիտարկումներ [12]: Տարբերում են DARPP-32 գենի մի քանի տարբերակ՝ “TT”, “TC” և “CC”: Տեստերի արդյունքում պարզվել էր, որ այդ գենը ազդում է դոֆամին հորմոնի քանակի /մակարդակի/ վրա: Վերջինս կապված է զայրույթի և ագրեսիայի կարգավորման հետ:

800 կամավորներ լրացրել են տեստեր, որոնք պարունակել են կամավոր հետազոտվողի զայրույթի նուպաների վերահսկման առանձնահատկությունները բացահայտող հարցեր: Միաժամանակ որոշել են, թե կամավորների արյան մեջ DARPP-32 գենի ո՞ր տարբերակն է առկա: Պարզվել է, որ DARPP-32 գենի “TT” և “TC” տարբերակ ունեցող կամավորներին բնորոշ է չարության /դաժանության/ և բռնկվելու /զայրույթի/ բարձր մակարդակ:

Բացի այդ, ավելի բռնկուն կամավորների մոտ նշածն մարմնում ավելի քիչ գորշ նյութ կա, այնինչ ուղեղի հենց այդ հատվածն է պատասխանատու հուզական /էմոցիոնալ/ հանգստության համար:

Գենի նման մոդիֆիկացիաները բնորոշ են Արևմուտքի մարդկանց: Հետազոտողները նույնիսկ ենթադրում են, որ զայրույթի դրսևորումը մարդուն օգնում է առաջ շարժվել կյանքում:

Գիտնականներն ընդգծում են, որ զայրույթի ակնհայտ դրսևորումը և այլ գերակշռող վարքագծային դրսևորումները, իհարկե, քննադատվում են հասարակության կողմից, սակայն քիչ չափաբաժնով հանդիսանում են սոցիալական հիերարխիայում ավելի բարձր դիրքի հասնելու պայքարի միջոց:

47, XYY քրոմոսոմային հավաքակազմով դեռահաս և հասուն տղամարդիկ շատ ագրեսիվ են, հակված են հակասոցիալական արարքների և վատ են հարմարվում հասարակության մեջ ապրելուն (այսինքն՝ դժվարությամբ են ինտեգրվում հասարակությանը): Կլայֆենտերի սինդրոմը սովորաբար հայտնաբերվում է բավական ուշ տարիքում: Եթե նման կարիոտիպ հայտնաբերվում է հասուն տղամարդու մոտ, ապա նա հոգեբանական աջակցության կարիք ունի: Որոշ տվյալներով, ազատազրկման վայրերում այդ սինդրոմով տղամարդկանց թիվը 10 անգամ ավելին է, քան նորմալ քրոմոսոմների քանակով տղամարդկանցը [13]:

Գիտնականները հայտնաբերել են, որ մարդու անմարդկային վարքագիծն ունի գենետիկական հակվածություն [14]: Նման եզրահանգման հանգեցին Երուսաղեմի Հրեական համալսարանի գիտնականները մարդկային AVPR1a գենի և մարդու դաժանության հակվածության միջև առկա կապի ուսումնասիրման ժամանակ: Գիտնականները շուրջ 200 ուսանողների մոտ կատարեցին ԴՆԹ-տեստավորում, իսկ հետո այդ ուսանողներին առաջարկեցին խաղալ “Dictator Game” խաղը, որի ընթացքում նրանք կարող էին ընտրություն կատարել խաղի հերոսների պաշտպանության և իրենց ճանապարհին ամեն ինչի անխնա ոչնչացման միջև:

Խաղացողների ալտրուլիզմի գնահատմանը զուգահեռ պարզվեց, որ դաժան և եսասեր մասնակիցներին /ուսանողներին/ բնորոշ է AVPR1a գենի ավելի կարճ տարբերակը, ընդ որում՝ մասնակիցների սեռի և նրանց վարքագծի միջև ոչ մի կապ չհայտնաբերվեց:

AVPR1a գենը կոդավորում է վազոպրեսին հորմոնը ճանաչող գլխուղեղի ընկալիչների ակտիվության վրա ազդող սպիտակուցները: Գիտնականները գտնում են, որ այդ հորմոնը, բացի անոթները նեղացնելուց և հակադիուրետիկ ազդեցությունից, ներգործում է կենտրոնական նյարդային համակարգի, ագրեսիայի մակարդակի և մարդու սոցիալական վարքագծի վրա: Գիտնականներին դեռևս հայտնի չէ, թե ինչպես է AVPR1a գենի երկարությունը ազդում վազոպրեսինի ընկալիչների վրա: Նրանք ենթադրում են, որ այն ազդում է ուղեղի հյուսվածքներում դրանց դասավորվածության վրա:

Դեռևս 2002 թվականին հայտնաբերվել է ագրեսիայի և մոնոամինոօքսիդազի միջև առկա կապը [15, 16]: Արդյունքում ցույց է տրվել, որ մոնոամինոօքսիդազի գենը, որը այլ կերպ անվանում են նաև «զինվորի գեն» կամ «մարդասպանի գեն», բնորոշ է այն ժողովուրդներին, որոնք ուրիշների հետ համեմատած ավելի հաճախ են հակված ագրեսիայի դրսևորման: Հետազայում Ֆլորիդայի նահանգի համալսարանի (FSU) քրեաբանության ֆակուլտետի ամերիկացի քրեաբան Կեվին Մ. Բիվերը (Kevin M. Beaver) և նրա կոլեգաները՝ Այովայի և Սենտ-Լուիսի համալսարաններից իրենց աշխատանքում հետազոտեցին ավելի քան 2500 հանցագործների ԴՆԹ-ի տվյալները և ապրելակերպը: Հետազոտողներն ագրեսիվ տրամադրված տղամարդկանց մոտ հայտնաբերեցին մոնոամինոօքսիդազ A-ի (MAOA) գենի յուրահատուկ տարբերակ, ընդ որում՝ այդ տարբերակն ավելի հաճախ հայտնաբերվում էր հանցախմբերի այն անդամների մոտ, ովքեր իրենց առավել դաժան էին պահում անգամ իրենց խմբավորման անադամների նկատմամբ:

Ինչպես պարզվեց՝ MAOA-ն ազդում է միջնորդանյութերի, մասնավորապես սերոտոնինի և դոֆամինի մակարդակի վրա, որոնք իրենց ազդեցություն են ունենում մարդու տրամադրության և վարքագծի վրա: Այդ հորմոններով է պայմանավորված նաև բռնության նկատմամբ հակման ժառանգելը:

Հետազոտության արդյունքները կիրառելի են միայն տղամարդկանց դեպքում: Պատճառը նրանում է, որ այդ գենը տեղակայված է X քրոմոսոմի վրա: Կանայք ունեն երկու X քրոմոսոմ, և, հետևաբար, այդ գենի երկու տարբերակ, որի պատճառով էլ նրանք ավելի հազվադեպ են մտնում հանցավոր խմբավորումների մեջ, օգտագործում գենք, ավելի քիչ են ցուցաբերում դաժանություն: Ինչը չենք կարող ասել տղամարդկանց համար. տղամարդիկ ունեն մեկ X քրոմոսոմ և մեկ Y քրոմոսոմ, այսինքն՝ այդ գենի միայն մեկ պատճեն, որին հակազդող երկրորդ պատճեն չկա: Ահա թե ինչու գենի հետազոտությունների մեծ մասը կատարվում է տղամարդկանց մոտ: Գիտնականներն ապացուցեցին, որ «զինվորի գեն» կրող տղամարդիկ ավելի դաժան են, դյուրաբորբոք /անհեռատես, անկշռադատ/ և ագրեսիվ: MAOA-ի գենի առկայության պատճառով տղամարդիկ կարող են առանց կշռադատելու վերցնել գենքը և արդյունքում դառնալ շատ դաժան հանցագործ: Այդ գենի կրողներն ունեն նաև հանցախմբերի հիերարխիայում բարձր կարգավիճակ ձեռք բերելու հակվածություն:

Այլ կերպ ասած, խուլիզաններ դառնում են ոչ միայն դաստիարակության պակասի կամ շրջապատի վատ ազդեցության պատճառով: Սերը փողոցային բռնության նկատմամբ ինչ-որ չափով պայմանավորված է գենետիկական գործոններով:

Ամերիակցի գիտնականների նման եզրակացությունը հնչում է որպես դատավճիռ:

Գենը, իհարկե, կարևոր է: Բայց կարևոր է նաև այն չդարձնել քավության նոխազ: Չի կարելի մարդու վարքագիծը բացատրել միայն մի ամինաթթվի կամ հորմոնի ներգործությամբ:

Գենը միայն նախազուլաացնում է պոտենցիալ վտանգի մասին, իսկ նրա առկայությունն ինքնին չի դարձնում հանցագործ կամ մարդասպան:

Միքայել Վինոգրադովը (էքստրեմալ իրավիճակներում իրավական և հոգեբանական օգնության Կենտրոնի ղեկավար, բժշկական գիտությունների դոկտոր, հոգեբուժարանի պրոֆեսոր) ասել է, որ՝ «Ըստ գենետիկների՝ կա ագրեսիվության համար պատասխանատու գեն, իսկ ըստ հոգեբանների՝ գլխուղեղում կան ագրեսիվության և սեքսուալության հետ դրա կապի համար պատասխանատու խորքային կառուցվածքներ: Եթե այդ կառուցվածքները խանգարված են, ապա արդյունքում կունենանք սերիական մարդասպան» [15]: Վինոգրադովը գտնում է, որ ագրեսիայի մասին խոսելիս այն պետք է տարաբաժանել ըստ ուղղությունների: «Ագրեսիվության գենը գոյություն ունի, բայց անհրաժեշտ է իմանալ, թե ինչպես է այն սոցիալականացվում և ինչպես է այդ էներգիան ուղղորդվում: Մարդը, որը հաճախում է ձյուդոյի խմբակ, իր ագրեսիվությունը դրսևորում է հայիոյելով: Մեկ այլ մարդ դրսևորում է այն գողություն անելով: Երրորդը՝ բռնաբարում է: Ծիշտ չի հնչում «մարդասպանի գեն», ավելի ճիշտ կլինի ասել «ագրեսիվության գեն»»: Մարդիկ ըստ հոգեբանական տիպերի բաժանվում են տարբեր կատեգորիաների: Կան անհատներ, որոնք երբեք չեն ցուցաբերում ագրեսիվություն, այդ թվում և վախկոտները, և համարձակները, և այլն: Դժվար է ասել, թե նորմալ մարդկանց հաշվով ինչ հարաբերություն ունեն ագրեսորները. որոշակի ցուցանիշներով նրանք մոտ 15% են: Անկախ տարիքից՝ նրանք պահպանում են ագրեսիվությունը: Չարքն այստեղ ավելի շատ վերաբերում է ագրեսիվության ուղղվածությանը: «Երեխան ծնվում է, հեծանիվ է քշում, լողանում է, բռնցքամարտով զբաղվում: Նրա ագրեսիվ էներգիան սոցիալականացված է: Մյուսը՝ ընտանիքի կողմից անտեսված երեխան, կատուներ է խեղդում, նրանց պոչերը կտրում, թռչունների վրա կրակում, նույնպես ագրեսոր է, բայց սոցիալական ուղղվածությունն այլ է: Երրորդ տղան, որն իրականում ապրում է Նովգորոդյան շրջանում, սպանել է հնգամյա հարևանին, նրա շանը, քիչ է մնացել այրի վաճառողուհուն, բռնաբարել է հասակակից աղջկան: Չիմա նա հոգեբուժական հիվանդանոցում է, որտեղ նրան հետազոտում են: Կամ՝ օրինակ, իննամյան տղան և վեցամյա աղջիկը հարբեցրել են խորթ հորը և դանակահարել: Իսկ տասներեքամյա մոսկվացի Վանյան տատիկի մոտ՝ գյուղում դանակահարել է մի տղամարդու և կնոջ, հետո սպանել համադասարանցուն: Եվ այդ ամենից հետո նա հպարտացել է, թե կարողանում է սպանել: Այս բոլոր երեխաները ցույց են տալիս ագրեսիվության նշաններ», - պատմում է Մ. Վինոգրադովը [15]: Կա կենսաբանական կամ ֆիզիոլոգիական մակարդակ, կա հոգեբանական մակարդակ, և կա սոցիալ-

լական մակարդակ:

«Այո, կա մարդկանց շատ փոքր խումբ, որոնք ծնվում են որպես ասոցիալա-  
յին, հակասոցիալական և չուղղվող հակասոցիալական վարքագծով մարդաս-  
պաններ: Կան նաև մարդիկ, որ ծնվում են ագրեսիվ: Եվ գենը պատասխանատու  
է ոչ թե մարդասպանության, այլ ագրեսիվության հակվածության համար: Օրի-  
նակ՝ աշխարհի բռնցքամարտի չենպիոնն ագրեսիվ է, բայց նա իր ագրեսիան  
վերահսկում է: Իսկ մեկ ուրիշ բռնցքամարտիկ (ոչ չենպիոն) բռնցքամարտից հե-  
տո սպանում է իր հակառակորդին» [15]: Կա նաև աուտոագրեսիա հասկացու-  
թյունը, երբ մարդիկ ինքնասպան են լինում: Դրա համար էլ է պատասխանատու  
ագրեսիվության գենը: Այս դեպքում ագրեսիան իր դեմ է ուղղված:

Ագրեսիվությունը դիտարկվում է որպես բնավորության գիծ: Մարդն ու՞ր է  
ուղղում այն, ի՞նչ դրսևորում այն կունենա: Մինչև վերջ դժվար է հասկանալ՝  
մարդն այն կդրսևորի միայն ճիշտ՞վ, թե՞ հակառակորդի համար այն ավելի վատ  
կվերջանա: Գիտությունը դեռ ի վիճակի չէ նման կանխատեսումներ անել: Հնա-  
րավոր է միայն բացահայտել նախատրամադրվածությունը: Յուրաքանչյուր երե-  
խայի մոտ ագրեսիվության նախատրամադրվածության բացահայտումը (գենի  
առկայությունը) մեզ հնարավորություն կընձեռի, ցուցաբերելով անհատական  
մոտեցում, կատարել հոգեախտորոշում և ստեղծել իրադրային դրական ու սո-  
ցիալական բարենպաստ պայմաններ՝ արդյունքում նվազեցնելով կամ չեզո-  
քացնելով ագրեսիվության գենի դրսևորումները:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Арзуманян С. Дж.** Психолого-криминологическая характеристика становления личности правонарушителя. // Ереван, 2000.
2. **Беличева С. А.** Сложный мир подростка. // Свердловск, 1984, с. 18.
3. **Беличева С. А.** Сложный мир подростка. // Свердловск, 1984, с. 185.
4. **Змановская Е. В.** Девиантология: (Психология отклоняющегося поведения). // Учеб. пособ. для студ. высш. учеб. заведений. 2-е изд. М., Изд-ий центр «Академия», 2004, 288 с.
5. **Клейберг Ю. А.** Психология девиантного поведения. // М., 2003.
6. **Лангмейер И., Матейчек З.** Психическая депривация в детском возрасте. // Прага, 1984, с. 65.
7. **Лоренц К.** Агрессия. // М., 1994.
8. Психология: Словарь // Под ред. А. В. Петровского и М. Г. Ярошевского, М., 1990, 121 с.
9. **Фурманов И. А.** Психологические основы диагностики и коррекции нарушений поведения у детей подросткового и юношеского возраста. М, 1998.
10. **Фурманов И. А.** Психология детей с нарушениями поведения. // Москва, 2004, 352 с.
11. **Шнейдер Л. Б.** Девиантное поведение детей и подростков. // М., 2005.
12. <http://www.point.ru/news/stories/19974/>
13. <http://www.humbio.ru>
14. <http://newsland.ru/News/Detail/id/437355/>
15. [http://infox.ru/03/soul/2009/08/21/Gyenyetichyeskaya\\_pr.phtml](http://infox.ru/03/soul/2009/08/21/Gyenyetichyeskaya_pr.phtml)
16. <http://www.rosbalt.ru/2009/08/15/663784.html>

**ПСИХОДИНАМИЧЕСКАЯ МОДЕЛЬ ПОВЕДЕНИЯ И ЕЕ  
ГЕНЕТИЧЕСКАЯ ПРЕДРАСПОЛОЖЕННОСТЬ**

*Л. Н. Куркчян  
А. С. Маргарян*

Исходя из психодинамической модели нарушенного поведения и достижений в области современной генетики, в работе была анализирована возможная связь между нарушенным поведением, в частности, проявлением агрессии, и генетической предрасположенности.

**PSYCHODYNAMIC MODEL OF BEHAVIOR AND ITS GENETIC PREDISPOSITION**

*L. N. Kurkchyan  
A. S. Margaryan*

Based on the psychodynamic model of disordered behavior and achievement in genetics in the work was analyzed the possible link between abnormal behavior, particularly aggression, and its genetic predisposition.

**ԵՐԿՈՒ ՎԵԿՏՈՐՆԵՐԻ ՍԿԱԼՅԱՐ ԱՐՏԱԴՐՅԱԼԸ  
ԿՈՌՐԴԻՆԱՏՆԵՐԻ ԵՐԿՉԱՓ ԵՎ ԵՌԱՉԱՓ ՇԵՂԱՆԿՅՈՒՆ  
ԴԵԿԱՐՏՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ**

**Ն. Հ. ՕՂԱՆՅԱՆ**

*ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի ուսանող*

**Հ. Հ. ՕՂԱՆՅԱՆ**

*Սանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Երկու վեկտորների սկալյար արտադրյալը սովորաբար դիտարկվում է կորր-դինատների ուղղանկյուն դեկարտյան համակարգում, սակայն գիտության տար-բեր բնագավառներում երբեմն ավելի նպատակահարմար է շեղանկյուն համա-կարգերի կիրառումը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում ու-սումնասիրելու երկու վեկտորների սկալյար արտադրյալը նաև շեղանկյուն հա-մակարգում: Դիտարկենք այն կորրդինատների շեղանկյուն դեկարտյան հա-մակարգում, ստանանք երկու վեկտորների սկալյար արտադրյալի բանաձևը՝ արտահայտված այդ վեկտորների՝ կորրդինատային առանցքների վրա ունեցած պրոյեկցիաների միջոցով և ցույց տանք, որ մասնավոր դեպքում, երբ կորրդինա-տային առանցքները միմյանց նկատմամբ կազմում են  $90^\circ$  անկյուն, բանաձևն ընդունում է  $\vec{a} \cdot \vec{b} = a_x b_x + a_y b_y + a_z b_z$  տեսքը, որն էլ հենց երկու վեկտորների սկալյար արտադրյալի բանաձևն է կորրդինատների ուղղանկյուն դեկարտյան համակարգում:

Հարթության վրա ընտրենք երկու հատվող թվային առանցքներ, նրանց հատ-